ՀԱՆԴԻՊՈՒՄ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԵՏ

18.03.2016 18:29

Մարտի 16-ին ՀՀ փաստաբանների պալատի նախագահի մարզային խնդիրների համակրգման գծով տեղակալ Արթուր Դավթյանը Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Մելանյա Առուստամյանի հետ առաջին մարզային այցն են իրականացրել: Նրանք այցելել են Շիրակի մարզ՝ Գյումրիում հանդիպելով գործող փաստաբան գործընկերներին:
Հանդիպմանը մարզի փաստաբանները խոսել են պրակտիկայում հանդիպող մի շարք հարցերից, քննարկել իրենց հուզող խնդիրները, ներկայացրել տարբեր առաջարկներ: Փաստաբանների հիմնական առաջարկը անօթևան գյումրեցիներին իրավական օգնություն տրամադրելն էր:
Հանդիպմանը նաև քննարկվել են փաստաբանի վարքագծի կանոնագրքին վերաբերող հարցեր:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })